

թեամբ, պրպտեկու համար մտաւոր աշխատանքի հանգրուաները, որոնք լեցունիկ են նորութիւններով ու յայտնութիւններով:

Շնչտենք անգամ մըն ալ թէ Ս. Յակոբի համար անյետաձգելի պէտք մը եղած է Մատենադարանի մը շէնքը, եւ ի զուր տեղ չէ որ Յորելիանական կեդր. Յանձնաժողովը լրջօրէն ձեռք առաւ գոյն, վստահելով հայ ժողովուրդի գաւառներուն ողջմտութեան, ազգասիրութեան եւ անոնց ուսումնասէր նկարագրին վրայ, եւ մշանջնատորեկ այս Յորելիանին յիշատակը եւ Սրբազան Յորելեարին անմրցելի գրասիրութիւնը:

Ս. Յակոբ ա՛յնպիսի հաստատութիւն մըն է, որ հայ ազգին ամէնէն խոնարհ գաւառներն իսկ յիշատակ մը ունին եւ իշխանական նուէրներու եւ յիշատակներու քով, ժողովրդական լուսաններ տեղ բռնած են Ս. Յակոբի դանձարանին մէջ:

Մատենադարանին շինութիւնը ա՛յնպիսի ձեռնարկ մըն է որ նոր պայծառութիւն մը սլափ տայ Ս. Յակոբին:

Բ. Ե.

ՍԵՐԸ

Յովհ. Գ. 16.

Մանուկ էի.— Սիրեցի ես
ժամը, լոյսը, խոնկը, ծնծղան,
երգը, նաեւ Յիսուսը՝ ա՛յն
Պարկենքին մէջ, Սիրեցի ես...

Եղայ մենծ տղայ.— Սիրեցի ես
Ընկեր, դպրոց, գրիչ, մեխան,
Սէր մ'ինկաւ մէջս իրրեւ շուշան,
— Ազգ, հայրենիք Սիրեցի ես:

Երիտասարդ.— Սիրեցի ես
Գողափար, գործ, աշխատանք լուռ...
Չայրեց սիրտս Վէնիսին հուր...
— Աստու գործը Սիրեցի ես:

Այ մարդ եղայ.— Սիրեցի ես
Գեղեցիկը ամէն բանին,
Մարդուն, ծաղկին, խօսքին, գործին.
— Մտապելը Սիրեցի ես:

Բայց, աւագ, ես ի՞նչ Սիրեցի...
Ի՞նչ կ'արժեն իմ սէրերս բոլոր
Քովն Անոր որ զաշխարհ սիրեց...
Եւ «զմրդին իւր Միածին ես»...

ԲԱԿ

ԳՐԱԿԱՆ

Ս ՈՒ Գ

ՀՕՐԹ ՅԵՇԱՏԱԿԻՆ

Ո՞վ է բանասրկեալը մեր երկուքէն, ժամանակէն ու միջոցէն չգիտեալը: Պատին միւս կողմն ես դուն, ու չեմ կրնար գէմքդ տեսնել: Ինչպէ՞ս պիտի խօսին իրարու բանասրկեալն ու ազատը: Քանի՞ անգամ պէտք է գլուխս դարնել մօթ մարմորին, որպէսզի գիտնաս որ ես եմ ծընրողը ու բաղկատարած, պաղատողին եւ լուռ: Եթէ որտիս ամբողջ արիւնը կաթիլ կաթիլ հոսի այս մօռայ խորհուրդին քօղին վրայ, պիտի բացուի՞ վերջապէս բերանդ սփոփանքի խօսք մը, բա՛ն մը, շարժո՛ւմ մը, ինծի տալու համար...

Բայց այնքա՛ն մօտիկ ենք իրարու, դուն պատէն անդին, ես այս կողմը քեզի կը կանչեմ, ու չեմ զիտեր ո՞վ է մեռեալը մեր երկուքէն: Արցունքի եւ աղօթքի այս իրիկունով քեզի կը կանչեմ՝ մօռնալով որ դուն այլեւս չես հասկնար իմ լեզուս ու քեզի պէտք է խօսիլ լուսթեան ամենախորունկ ճառագայթով: Սովրեցո՛ւր ինծի այն հաւատքը, այն կերպը, այն շարժումը, այն երազը, այն համբոյրը հոգիին շրթներուն, այն մեծ անհուն լուսթիւնը որուն մէջէն դուն կը լսես իմ ձայնն ու չես ուզեր պատասխանել...

* * *

Եւ հիմա մեծ ու խորհրդաւոր կոխը սկսած է քու մարմնիդ ու բնութեան միջև: Քեզ յօրինող բոլոր նիւթերը իրենց սկզբնական աղբիւրներուն կը վերադառնան: Բնութիւնը ետ կը պահանջէ իր աւազած նիւթերը որպէսզի անխախտ կարենայ պահել անպատում ներդաշնակութիւնը արեւիկեքին, անպատում կշիռը աշխարհին: Բայց ո՛ւր գնաց հոգիդ: Ո՞ւր է անոր աղբիւրը որուն ծարաւին եղայ լուստով: Ո՞ւր կ'երթայ մարած լոյսը գոր մեր աչքերը չեն տեսնիր այլեւս: Ո՞ւր կ'երթան գոյները թօշնած ծաղիկներուն, ո՛ւր կ'եր-